եօթն թիւ խառնելով ընդ ձեզ զՊատրիարքն 'ի վնաս Նորին սրբազնութեան և 'ի ձեր հանդատութիւն. գրեցէք ինչ զոր կամիք զմինչ 'ի Կոստանդինուպոլիս ըստ հաճոյից ձերոց, դուք գիտասջիք, միայն թէ բառնալ 'ի միջոյ զխարդախն և զխարդախամիտն ըստ ներքնոյն և ըստ արտաքնոյն գործադրութեան. թէպէտ ինքն միշտ ջանայ դաղել եւ երդմամբ զինքն արդարացուցանել։ Միթէ չդիտէի՞, միթէ ո՞չ գիտացի որ գործեցաւն եւ որ գործելոցն էր, եթէ մնայի յայդր, բայց պարտաւոր լիցի որ եղեւ պատճառ Նորին համարձակութեան։ Շատ քաջութիւն Աթոռայնոցդ մեծաց եւ փոքրունց, եթէ յայսմ հետէ անվնաս և հանդարտ մնայցէք, որքան երկոքին դոքա ըստ առաջնոյն վարեսցին, զորոց երբեմն ճաշակեցաք զպտուղ եւ արդ իսկ։ Զայսքանս վասն այնորիկ գրեցի առ եղբայրութիւն ձեր, զի և դուք վկայեցէք թէ գիտեմ եւ լռեմ»։ Եւ ապա թախանձանօք խնդրէ զ10,000 դահեկանն զոր պայմանաւ տուեալ էր յառաջագոյն Աթոռոյն, առնուլ զշահ Նորին 'ի տարին 1000 դահեկան, և զկնի մահուան իւրոյ մայր գումարն մնալ Ս. Աթոռոյն. այժմ խնդրէր միայն զ10 տարեկան շահ 10,000 դահեկան, և զմայր գումարն թողոյր դարձեալ ըստ կտակին իւրոյ Աթոռոյն, և աղաչէր սիրով կատարել զայս խնդիր իւր, զի մի վերըստին ծագեսցի ատելութիւն, և ինքն խոստանայր կատարել զգործ Աթոռոյն եթէ ծանուսցեն։

Գրեաց և առ Կիրակոս եպիսկոպոս մաերիմ բարեկամ իւր, և խնդրէր առաքել զդոյս իւր զոր թողեալ էր յԵրուսաղէմ, 'ի Կիպրոս, 'ի Զմիւռին և 'ի Կոստանդինուպոլիս, յորոց զսմանս ընկալեալէր ինքն 'ի Պերսիթ ընդ դոյից Նորին (1824. 'ի 1 Ապրիլի)։ Գրեաց առ Նա Կիրակոս եպիսկոպոս գիր յանդիմանութեան և մեղադրանաց, որում պատասխանէ այսպէս. «Ասուած և զքեզ ազատեսցէ յանել որոգայթէդ. ոչ ուրացայ զհաւատս, ոչ փոփոխեցի զկրօնս, ոչ 'ի բաց թողի զկարգս, ոչ լքի զսատիճանս, ոչ արհամարեցի զՎէքիլութիւն Տէրութեանն քրիստոնէի. այլ սովիմբ պաշտօնիս Վէքիլութեան քրիստոնէի Մեծի Տէրութեան Նափոլիթանու առաւել համարձակութեամբ պաշտեմ և յարգեմ զամենայնն. երանի որ ոչ գայթակ-